




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

2-20

891.99
2-20
1.1

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔԻ

ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ

Մ Ա Ս Ս Ա

891.99
2-20

ԹԻՖԼԻՍ

1925

ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ՅԵՐԳԸ

Մութ ուժեր, մութ գիշերն ու ամպեր՝
անհամբեր,
Վոր իջնեն սևաթույր ու նսեմ—
յես կուզեմ...
Յես կուզեմ և տարերք և պայքար
խելագար.
Ձեմ ընկնի թևաբեկ, թևաբեկ—
ո յերբեք:
Թող հնչեն, թող հնչեն ռազմաբեր
շեփորներ.
Նոր-Ուխտի մեծ կովին ոն վազենք
դեպի զենք.
Յեղ, ընկեր, մեր գործի վեհ զինվոր,
դու բանվոր,
Այ կարմիր արյունով մենք կերտենք
մի նոր շենք:
Գերություն ազգերի և կապանք,
հալածանք,
Այս կյանքում առ հավետ խնդրաւովին
հիմնովին..
Մինչ ազատ, հարազատ, բոլոր հազար,
հավասար,
Սովալլուկ մարդկության մենք կը տանք
աշխատանք:

1917 Հոկտ. Թիֆլիս



44278-63

Մ Ա Ս Ս Ա Յ Ի Ն

(1917 թ. դեկտեմբեր 17-ի դեմոնստրացիայի առթիվ)

Քաղաքն անսովոր ցնծում է, յեռում.
 Թափվում են մարդիկ, դրոշներն անհամար
 Ծփում են հեռվից անսահման հեռուն...
 Մեծ տոն է անշուշտ մասսայի համար:
 Շարքերը հազար գլուխների մի ծով,
 Կասեա դարեվոր անտառն է քայլում,
 Հսկա կաղնիներ, ինչ վոր հարվածով
 Բնահան յեղած, քայլում յեն, քայլում:
 Նրանց փոթորկոտ յերգերը հզոր
 Թնդում են մեկից հազար կուրծքերից.
 Փողոց, գործարան ու մասսան այսօր—
 Ո ինչ հաղթանակ տոնում են նորից:
 Վորքան վեհուկյուն և ինչ տեսարան...
 Ինչո՞ւ դու այնպես ձուլվում ես նրան,
 Մբոտ մասսային, հոգիդ փոթորկում,
 Ու կուլ ես գնում մասսայի գրկում:
 Ու սիրտդ, ինչո՞ւ, խփում է արագ.
 Աչքերը քո հեղձ կրակ են, կրակ.
 Շուրթերդ վառվում, այդ ինչ ես յերգում
 Յեվ անհետ կորչում հազարի գրկում...
 Հազարը՝ անդուստ փոթորիկ է խենթ,
 Պաշտում եմ նրան, պաշտում եմ յես խենթ—
 Տարերքը հզոր, խորաակող վոգին,
 Որհնանք եմ յերգում ժայթքող տարերքին:
 Ու պաշտում եմ յես այդ շարքերը սուրբ,
 Վոր թեև մրոտ, գոեհիկ ու բիրտ...
 Նրանք են կերտում մեր աշխարհը նուրբ,
 Նրանք են ծնում ապրուստները կիրթ:

1918 թ. հունվար, Լենինգրադ

ԻՄ ՅԵՐԳԵՐԸ ՄԱՍՍԱՅԻՆ ԵՄ ՆՎԻՐՈՒՄ

Իմ յերգերը մասսային եմ նվիրում,
 Իմ հույզերը հաբաղատ են մասսային.
 Իմ յերգերը թող վոր հնչեն գոեհիկ—
 «Գեղեցկության» յերկրպագու
 Հեզ քուրմերի ականջները թող ծակեն,
 Փուլթ չե—
 Նրանք անարգանքով ինձ ծաղրեն.
 Շատերն ինձ չեն հասկանա.
 Յես ոտար եմ շատերին.
 Իմ յերգերը հարազատ են մասսային.
 Իմ յերգերը մասսային եմ նվիրում:
 Յես իմ կյանքը մասսային եմ նվիրել,
 Իմ պոեզիան ցած խավերում թող հնչե.
 Նրանց համար յես յերգեմ—
 Միլլոնների հզոր կամքը, անհաղթ ուժը
 Յեվ բնագդը և կրքերը փոթորկող:
 Թե շատերը այլ յերգերի սիրահար,
 «Գեղեցկության» ճահիճներում չնչասպառ—
 Ինձ ծաղրեն,
 Փուլթ չե,
 Ընկեր,
 Յես ապրել եմ տառապանքով, զրկանքով.
 Յես ծնվել եմ կարեբից.
 Բիրտ գավալն եմ մասսայի.
 Իմ հույզերը մասսայից եմ ժառանգել.
 Յես ոտար եմ «գեղեցկության» քուրմերին.
 Իմ յերգերը մասսային յեմ նվիրում:

1920 Մոսկվա

ՄԱՍՍԱՆ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԻՋՄԸ

(Կարմիր սերնառ)

Տաղեր եմ կանչում

յես

նորից. —

Յերգեր ու վերքերն

իմ

հոգու...

Ո սերդ ե վառել

իմ

հոգին

Քո հոգին ե լափում

ինձ

նորից:

Մեխվել ե հայացքդ

իմ

սրտում,

Վեքեր ե բացել

"

անշափ...

Վերքերս են ծորում

ալ

արյուն...

Հայացքդ ե մեխվել

իմ

սրտում:

Սիրում եմ պայծառ

Քո

աչերն,

Վոր ինձ են նայում

միշտ

ղվարթ.

Կրակ են շողում

և

հեռից...

Հրդեհ են, հրդեհ

Քո

աչերն:

Այրվում եմ հրդեհ

Քո

ջերմից.

Արևդ ե վառում

իմ

հոգին.

Կրակ եմ դարձել

յես

հիմա...

Յես Քոնն եմ այսօր

և

հավերժ:

Յես

Քոնն եմ,

յես

Քոնն եմ

միշտ.

Դու

Ի՞նչ ես,

Դու

Ի՞նչ ես.

հեյ...

Յես

հուր եմ,

յես

հուր եմ—

բյժւր:

Դու
Մեկ ես,

Դու
Մեկ ես
սեգ:

Դու մեկ
Ու սեգ
Ա-րև.

Յես հուր
Յես բյուր,
Բա-րև:

Դու լույս,
Դու հույս
Շող-շող.

Յես ալ,
Յես վառ
Քո շող:

Դու շող,
Շող-շող
Սեր-կույս.

Յես Քու
Հո-գու
Ծիլ-բույս:

Դու վարդ
Զը-վարթ
Գա-րուն.

Յես ծոր,
Բոսոր
Ա-րուն:

Հեյ սեգ
Ու մեկ
Ա-րև,

Քեզ հուր,
Քեզ բյուր
Բա-րև:

ՄԵՐ ՓՈԹՈՒՅ ԴԻՏ ՅԵԼՆԵՆ ԳԱԼԱՆԳՆԵՐ

Յեվ խորհուրդ և համբույր և մրմուռ
Կազմեցին սերտ ողակ մեր կյանքում,
Զուլեցին մի լայն սիրտ մեր կրծքում —
Ալմազ կամք, պողպատից ել ամուր:
Ու ճախրեց մեր հողին փոթորկուն,
Դողդողաց նոր կյանքի հույսերով,
Այս կյանքում մենք կեցանք միշտ ստիկուն,
Մեր ճամփեն թեև լի փշերով:
Փշերով ծածկեցին մեր ճամփեն.
Պատենքներ քաշեցին մեր առաջ.
Գազաններն ուղեցին մեզ լափեն —
Հարամին չը լսեց մեր հառաչ:
Իժերի անապատ մենք ընկանք
Ու թույնով սրսկվեց մեր արյուն,
Թույնի դեմ կերտեցինք հակաթույն,
Խայթերին մենք դարձանք անպա:
Ու հսկա քայլերով մեր առույգ
Մենք անցանք անտառներն կուսական.
Դարերից վառեցինք մի խարույկ,
Վոր հրով պիտ շիկնե ապագան:
Թե խարույկն մեզ լափե իր տապով,
Մեր փոշին տա բամուռն ցիր ու ցան,
Փոթորիկ աճյունիս նոր թափով —
Թող լսեն մեր համերգ բյուրածայն:
Զը պղծեն հրաշունչ մեր մարմին —
Ժամերի անվեղար ժառանգներ.
Պեղումներ թող անի հարամին,
Մեր փոշուց պիտ յեխեն ֆալանգներ:

Փալանգներն պիտ յելնեն մեր փոշուց,
 Բիլիոններս յերբ թանչեն հրակեզ,
 Մի փոշի բարձրանա ամպի պես —
 Հարամին կուրանա մեր փոշուց:
 Կուրացած աչքերով թող վայի.
 Հոյս չը կա, լույս չը կա խլուրդին.
 Իր հողին անբնակ, ամայի,
 Թույն ու մաղձն հարազատ խառնուրդին:
 Յեվ խարույկն թող լափե մեզ տապով,
 Մեր փոշին տա քամուն հրակեզ.
 Փոթորիկ աճյունիս նոր թափով —
 Փալանգներ պիտ յելնեն ամպի պես:

1923 թ. Եսսենտուկի

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀՐԴԵՂ

8-րդ տարեմիտին

I

Արշալույսի սարսուռներու,
 Աշխարհով մեկ,
 Հոսանք անցավ ելեկտրիկ,
 Վոր կը նյութե
 Ընդվզումի Դինամոն:
 Ելեկտրական այդ հոսանքից
 Թող վոր պայթե ամեն յերկիր,
 Ամեն յերկիր,
 Վոր լեցուն ե վառողով:

Ի՞նչ...
 Վառող չը կա:
 Վառողից շատ ի՞նչ կա հապա:
 Բոլոր-բոլոր
 Մեծ ու պստիկ ֆաշիստները,
 Տես,
 Վառողի սան կը դիզեն ժամե-ժամ:
 Ձե վոր նորից պիտի գոռա հրետանին.
 Ձե վոր նորից միլյոն ուսմբեր
 Պիտի պայթեն ցաք-ցրիվ:
 Միլյոն բանվոր,
 Քանի,
 Քանի անգամ
 Վառողի թույն պիտ ծծե:
 Միլյոն բանվոր,
 Գիտեք...
 Գիտեք ինչքան
 Վառող ունի իր կրճքում:
 Ի՞նչ փուլթ,
 Յեթե,
 Մի կայծ միայն կը պակսի:
 Հանքահորի ֆանտանները
 Նավթ են ժայթքում անընդհատ.
 Յեվ ժայթքումից
 Նավթը կեռա լավայի պես.
 Միլյոն,
 Միլյոն յերակներով
 Լավան,
 Շիկնած,
 Հոսելու ե ամեն տեղ,

Ամեն տեղ,
Ուր վոր կրակ կը տենչան.
Ուր մազութե կաթսաներում
Միլյարդ խարույկ կվառվի...

Յեվ ան,
Մեկ-մեկ,
Թող վոր պայթեն պահեստները վառողի:
Հին աշխարհը
Թող վոր դողա հիմքերից:
Ովկյանների ջրերն անդամ
Թեժ բոցերից վոր ցամքին—
Տիեզերքը պետք է շիկնե
Հոկտեմբերյան հրդեհից:

II

Հոկտեմբերյան հրդեհներում
Իմ աշխարհն է շիկանում.
Իմ աշխարհը—
Սե-Սե-Սե-Տե:

Ուր յոթ տարի
Մենք մի նոր շինք կը կերտենք.
Ուր յոթ տարի
Յերկրագնդի
Մեկ-վեցերորդ հողաշերտը
Կարմիր գույնով կը նախշենք.
Յեվ յոթ տարի
Յերկրի մեջքին
Մի նոր գոտի,
Կարմիր գոտի կը կապենք:

Եկվատորը
Ի՞նչ է հիմա մեզ համար.
Յերբ հյուսիսում
Քանի-քանի
Եկվատորներ վառեցինք:
Յերբ մինչև իսկ մեր հրդեհից
Բևեռների սառույցները հալվեցին:
Յերբ մինչև իսկ,
Գլխաշենների փոխարեն,
Ալպերի ցուրտ զազաթներին,
Կարմիր վարդեր
Ու ապելսին
Կը փթթին:

III

Ու կամ այսօր գեթ մի ապուշ,
Վոր կասկածի
Հրդեհների նոր թափին...

Յերկրագնդի ամեն տեղում—
Միլոններիս աչքերը սուր
Հուր են տեղում:

Յերկրագնդի ամեն մի վայր—
Հրդեհներիս բռնյն է հիմա
Ծայրե ի ծայր:

Յերկրագնդի ամեն վայրում—
Հրդեհներիս բռնյն է հիմա
Վեր բարձրանում:

Յերկրագնդի ամեն մի տեղ
Հրդեհիս դեմ վնտրոճւմ են զուր
Դարման ու դեղ:

Ու կա այսոր դեթ մի ապուշ...

Թող զան մի ուժ,
Վոր աշխարհի հինգ ցամաքի
Յեւ թե բոլոր կղզիների,
Բոլոր-բոլոր
Բյճւր-բյուրավոր
Խարույկներս հանգցնի:

IV

Հոկտեմբերի ավանդները —
Միլյոն սրտեր շեկնեցին:

Միլյոն սրտեր —
Թող վոր խփեն
Լենինիզմի շեշտերով:

Պայքարի շեշտ,
Պայքարի ըխամ թող վոր տա —
Մեկ-միաձույլ կոմիսներն:

Լուսարձակներ,
Դեպի ամեն,
Ամեն կողմ —
Թող վոր թռչեն
Միջնաբերդից Մոսկովյան:

Մոսկովը մեկ կանգուն պահակ:

Յեւ թե քանի,
Քանի կանգուն պահակ տեսանք
Դասակարգի պայքարում:

Քանի-քանի հերոսամարտ
Մենք ապրեցինք շարե-շար:

Ի՞նչ զրվագներ,
Ի՞նչ մաքառում —
Մենք տեսել ենք մեր աչքով:

Թողեք վոր յես —
Հազար-հազար
Ու մեկ անգամ
Գոչեմ նորից. —

Կեցցե՛ հավերժ Հոկտեմբեր:

ՅԵՐԲ ԳՆԶԵՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ

Յերբ հնչեն շառաչով շեփորներ անդադրում,
 Վորոտան մարտակոչ զոգանջներ ըարձրունքից.
 Դարևոր թշնամուն, արյունոտ պայքարում,
 Դեմ յեկեք հարազատ ընկերներ սրտակից:
 Վարդաշող արևելք խափարից լուսանա.
 Մինչ գիշերն մոլեգին կը հանգչի հոգեվար,
 Փոթորիկ շարքերով մարտնչեք դուք սնան,
 Նոր կյանքի արշալույս ձեզ նայի վոսկեվառ:

1915 Մոսկվա



Պատրաստ և տպագրություն համար

ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ

Կ Ա Ր Մ Ի Ր Հ Ր Ե Շ

Հոկտեմբերյան պոեմ

50 էրգ

ՀՀ Ազգային գրադարան



NL0341719

37905